

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԿՐՐԻԲԱՍԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ

ԸՍՏ Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ

ԵՒ ԱՆՈՐ ԱՂԲԵՐԱՑ ՎՐԱՑ

Անշուտ եթէ ոչ ամենուն, այլ գէթ ազգայնոց գրագէտ դասուն ծանօթ է մեր Խորենացոց Հայոց պատմութեանը՝ խիստ քննադատութեան ենթարկուած ըլլալն է՝ որ յօտարագգեաց եւթ, այլ և յազգայնոց: Այս քննադատներէն ոմանք երկիր զածք են և արևելեան հնութեանց հմուտք, իսկ այլք բոլորովին ժխտող դրութեամբ դժբաղդարար սանն բան կործանող անհաւանք. որոնց ուսումնական ուղիարհի մէջ ունեցած համբաւն և գիտութիւնն որչափ մեծ է և անժխտելի, նոյնչափ և սակաւասկան բացատրութիւններն ամենուն յայտնի և շատ մեծ է, զորս և առանձին երկապիրութեամբ յանդիմանեց բազմահմուտն Կուղչըմիթ, անոնց Ասորեստանի և Վանայ սեպածե արձանագրութեանց ընթերցման մասին:

Աստի որչափ որ մէկ կողմանէ պարզապէս ազգասիրական եռանդով կամ 'ի կրօնական ոգւոյ թելադրեալ՝ այդպիսի ծանր և քննադատական ասպարիզի մէջ կոյր գիւրջաց զԽորենացին պաշտպաններ ծաղրական է, և սչ ճշմարիտ բանադատութեան արգասիք, նոյնչափ և անհանդուրժելի կ'երևի, երբ որ և իցէ սնդին և պատկառելի հնութեան մնացորդք, առանձնական, կամահանոյ, անհիմն և յոկանական և բառական ենթադրութեանց գոհ ըլլան, առանց պատմական՝ ներքին և կամ արտաքին ստոյգ գոհացողիչ հաստատեաց: Ասոր համար իբրև ճշմարտագիտիչ՝ այս երկու չափազանց և դէմ ընդդէմ կարծեաց բեւոճերուն միջին կեցած կ'ուզեմք մեր գիտողութիւններն ընել, ժամանակին թողով նորանոր քննութեամբ խնդրոյն ստուգութիւնը լաւագոյն կերպով հաստատել:

Մարիբասեան կամ Խորենացոյ երկապիրութեան քննադատութիւնն սկաննելէն առաջ ենթադրութիւն մի ընենք. Համարինք թէ դարական յեզգիտութեանց ենթարկուած է մինչև առ մեզ հասած ամբողջական չէնք մ'ըլլար, որ ունենար նաև խր խարխուլ և անպարմար մատուներ, և մենք ուզէինք նորոգելով՝ հաստատուն պահել զայն. այդ այս պարագային մէջ իբրև ճարտարապետական արուեստի հրմուտ՝ ինչ պիտի ընէինք. ո՞չ ապաքէն ամեն

բանէ առաջ և ամենայն զգուշութեամբ այն չէնքին հատատուն յենարաններ պիտի նարտարէինք, և անկէ քար մը կամ պակասաւոր մաս մը դուր ձգելու ժամանակ՝ ուրիշ նոր և քան զայն գեղեցիկ և հաստատուն մաս մը՝ տեղը պիտի ազուցանէինք, և ոչ թէ ամեն կողմանէ քոյքայելով և քակելով տնէ կմախք մը թողուինք, կամ գլխալին 'ի հիմանց տապալէինք: Այսպէս րսելու ենք նաև հայ Հերոդոտոսին բազմազան լեկապիրութեան նկատմամբ, որ ոչ միայն Հայաստանի ոսկեգարու մատենագրութեան հրապարակատ և յիւրում սեռի աննման գործ մ'է, այլ նկատելով զայն իբրև փրկաստնութեան ձևով՝ հնոյն Հայաստանի բարոյական և քնական դիմաց ազոտ լուսանկար մը, որ իւր ժամանակագրական և պատմական սկիւմայ շատ թերութիւններովն հանդերձ, (զոր յայտնապէս խոստովանելու ենք, սրու եթէ ուչ դնելու ըլլանք՝ համարաւարդն անգամ 'ի պատմագիրս Հերոդոտոս, Քսենոփոն, Կտեփիաս, և այլք, ևնթակայ եղած են), ունի նաև շատ և շատ ճշմարիտ և ամենահին պատմութեան հիմունք, ազգային հնաւանդ երգեր, զրոյցք, բանեց, անձանց և տեղեր, և բազմաթիւ և և կարևոր աւանդութիւններ:

Սակայն գ ուստի է յոյժ, զի արդէ բանասիրաց շատերը կարծես թէ բարոյովին մեր վերին սրինակին հակառակ փարսեցան և կը վարուին մեր պատմահար հետ, ինչպէս են Ուերդ, Փաշրովեր, Ռոնան, Լաւիճրի, և այլք, թէպէտ և ամբողջական երկապիրութիւն մը գրած չեն այս նիթոյս վրայ: Միայն այս վերջի տարիներու մէջ եղաւ յատարաց Կուղչըմիթ տաշտնը, զուրը գերմանացին, որ ճգնեցաւ խախտել զայն առանձին երկապիրութեամբ, և մասնաւորապէս բացասական գրութեամբ:

Եղան և են ուսաբանակ Հայոց մէջէն քաջափութ ուսումնագէտք, յորոց մասնաւոր յիշատակութեան արժանի են Մ'կրտիչ Էմին և Ք. Պատկանեան՝ բանասէրք, որոնք բոտ բուսկանին իրենց անպառ և սուր քննադատութեան մէջ անգամ՝ Լանացին (եթէ ըլլայ ազգասիրութեան ոգւով և եթէ ուղիղ տեսութեամբ) Մ. Խորենացոյ չիմուածին, եթէ ոչ

րատ ամենայնի, այլ գէթ անոր պատմական և հեղինակական հիմունքը անխախտաւ պահել, թէպէտ և Խորենացոյն վրայութենէն աւելի՝ վերոյիշեալ ազգային երգը և անգիր ասանդու- թեանց վրայ հիմնուած :

Սակայն Նմին՝ յամին 1881 ուզեց առանձին երկասիրութեամբ մը իւր գրիչը հասց շերտոտու- պին դէմ՝ գարձրնել: Եւ անոր պազայնոց մէջ ու- նեցած համարու մը իսպառ. անհետ ընել, և կը խտտանար ազգասէր ժողովականաց ակըմբին ղիմանէ՝ անոր պատմութիւնն հիմն 'ի վեր տա- պայելով՝ աւերակացր վրայ նոր չէլքեր շինել. բայց իրզք նոր բան մը չըրաւ, ըստ վկայութեան Պատկանեանի զայլ Ռիւնանի, Պարզմէրի և Օ- բերդի բազում անգամ կրկնուած կարծեացն արձագանքն Հնչեցրնել, իւր վիպը ձեռն Հայա- ստանի երգոց վրայ յորինած երկասիրութիւնը վերտաին բարգաւաճեցրնելով:

Հուկ 'ի վախճանի յիշելու ենք դարձեալ Ա. Մ. Վարագաչեանի՝ ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական և բանասիրական տեղեկու- թեանց ֆենական պատմութիւն Հայոց խորա- գրեալ նոր երկասիրութիւնն, որ յատուկ կար- զաբանութեամբ և քննադատական նոր ոճով յորինեալ հեղինակութիւն մ'է: Սակայն միւս կողմանէ՝ (միշտ յարգելով հեղինակին արդի բանասիրաց վրայ ունեցած հետաքրքրն), չենք կրնար լուրթեամբ անցնել անոր մեզի վրիպակ երեցած տեսութեանց նկատմամբ 'ի պատմա- կանին, և գՄ. Խորենացոյն խարդախ համարե- լուն անտարբեր մնալ: Կարծես թէ իրազնէն հեղինակն իւր նոր երկասիրութեան՝ րոտ եղրա- զոյն տեղիկարեանց վերադիրք դրած ժամանակ մասնաւոր առաջադրութի ն մ'ունի, իբր կէտ բաժանման՝ իւր պատմարանական քննադա- տութեան մէջ՝ բարտովին զհին պատմութիւնը մերժելու: Այս տեսութեամբ, անշուտ վերայի- չեալ ուսումնականաց և ան, նց համախօհից ըն- թացիցն հետեւելով գրեթէ քայլ առ քայլ, և երբեմն անոնց նորահնար լեզուաբանական են- թարգրութեամբ, և յամսիւս ատ և անդ, ա- լելի ըստ գրիպաց քան թէ իրզք, հանգիպած համաձայն և նոյնանիչ բառեր գտնելով՝ կ'ևզ- ծանէ՝ մարիբասեան պատմութեան մէջ եղած անձանց, տեղեպ և անուանց նշանակութիւնը, որով և պատմութիւնը, և կը շնանց աննոցմով նորանոր անուներ հնարել և նշանակութիւն տալ. աւելի զարմանալին այս է՝ որ կը շնանց ազգին համար նոր նահապետներ և պատմու-

թիւն մը յորինել. առանց պատմարանօրէն հա- ւատելու թէ ռատի յատաջ կու գան այն բա- ոտեր, ի՛նչ լեզուի, ազգի և ժամանակի կը վե- րաբերին, ի՛նչ ծիւղ կը կազմեն, և որչափ ըս- տուգութիւն ունին և պատմական արժէք. այլ նա բաւական կը համարի միայն այսպիսի ա- նուանց 'ի ստուգութիւն՝ արամեական և կամ սեմական յեզուաց արմատական բառէ յաւելու մե- Կարծես է՝ արդեօք առանց արիական կամ սե- մական լեզուաց կատարեալ գիտութեան՝ նո- բանոր ստաղգեղներ բանալ, և զԽորենացոյն անոնց մէջ տղէտ անուանել, արուն՝ Արեան, Ա- սորու և ուրիշ արեւելեան պազաց և Յունաց վրայ ունեցած խորին հմտութիւնն, հակա ա- կորդն անգամ Կուզըմիթ գարմացմամբ կը դը- բուաւտէ: Այս կերպով գՄ. Խորենացոյ, և ա- նոր արբերոց աւանգած քաջտալայելուչ շինու- ծը կործանելով իւր միութենէն՝ անկէ վերջը ա- մեն բան կցկտոր կը մնայ, և անստուգութեան թանձր խաւարով մը ծածկուած: Աւտի ա- ռանց ոգւոյ հակաուսկասիրութեան կ'ընեք, թէ ամենայն զք ուշադրութեամբ այն գիրքը կար- զացած տեսմանակ, Խորենացոյ ասանդածը դուրս թողլով և հեղինակին նոր տեսութիւն- նեշը միայն առնելով, կը գտնէ նորթինակ չէնք մը, որուն յորինուածութեան վրայ անշուշտ նոյն ինքն հեղինակն զարմացած կ'ըլլայ: Հե- ղինակն ինչպէս այս՝ նոյնպէս մնացած ու- րիշ շատ կէտերու մէջ, միշտ իւր սեփական լու- սէն և տեսութենէն աւելի՝ Ռիւնանի և Սղրուսի հատուածակողմէն անցած լուսովը իւր բառա- կան և բանադատական անգրագարմութիւն- ներն ու եղրակացութիւնը կ'ընէ. ուշ չի դնե- լով նոյն իսկ արեւելագիտաց մէջ եղած տա- րածայնութեանց, անտեղութեանց և յայտ- նի հակա ութեանց՝ լեզուաբանական գիտու- թեան նկատմամբ, որք հին ազգաց պատմու- թեան նման նաև անոնց լեզուաց ծագումը, յեզագիտութեամբք ծաւալին և անեղծ կամ եղծ մտլով՝ զեւս ևս խոր խաւարի մէջ ծած- կուած և տկուծանելի ատեղծուած մը կը հա- մարին՝ : Սակայն ֆենոդատական պատմու- րեան մատենագիրն ստալ խաղաղով՝ սոսկապէս անոնց հանձարեղ ենթադրութեամբք, կ'եզ- ծանէ Մար իշապայ գոյութիւնն, Արորեստա- նեպց կամ Փարղէացոց և Արեանց դիւաններն և Խորենաց օր հատարմութիւնն, ամեն բան վիպասանական առասպել համարելով՝ և կամ Խորենացոյ կեղծիք:

1 Ռիւնան, Պատմ. Սեմ. լեզ. հա. Ա. էջ. 103:
2 Արցոյ հեղինակն (Պարագաչեան) լեմ գիտորի հեշ զիմամբք նախ զՄարիբասեան պատմութիւնը հանդերձ ուրիշ Քաղզէացի ազգիւրեերով, (որոնք կը գանուեն սա. Եւսեբեայ և Յովսեպոսի), պազապէս Խորենացոյ մակամտածական գիտ համարելով, ոչ միայն այս երեք

հեղինակութիւններն ևս խաբեպայ կ'անուանէ, այլ և զԷստեռական գիտ Դանիելը, Եղրայ, հաւատարու- լեան արժանի չի համարի: Դարձեալ Իրեւ. երկրա- բանական ստաղք հաւաստեք՝ հակառակ Մենեղոյ Գրոց ժամանակագրութեան՝ զժամանակագրութիւն մարգ- կային ազգի՝ հասպատակ անելի անդր քան 6000 տարի

Ասկայն ժեռք առ ընդհանոր քննադատս ուղղելով խօսքերնրս կ'ըսենք, թէ այն առաւ, պէտեմ գիտնակով, (որ ոչ է ուղիղ), զարդարեալ վիպաց մէջ որչափ ստոյգ և նախապատմական աւանդութիւններ ծածկուած չկան արգելքով կրնայ բացատրել, վասն զի ինչպէս արարչութեան և իրնեղեղի՝ սպայէս նաև անկէ վերջը նախապատմական և ամենաճին ժամանակի մէջ եղած դիցազանց և թագաւորաց վրայ պատմուած ամեն վիպասանութիւնք, զորս կաւանդեն մեզ պատմագիրք Քաղղէացոց և Յունաց, ունին միտ ինչ ինչ, Ա. Գրոց պատմութենէն, իբրև հիմն իրականութեան: Եւ այս վիպասանական գոյներն՝ ըստ մտաւորական և քնական հանգամանց ազգայ՝ կր զանազանին իբրամէ, և բազմադարեան հնութիւնն իւր մամապատ երանգով այնպէս կը ծածկէ և կամ կը ներկայացնէ զանոնք հետախուզին սպաց առնէ, որ չէ կարելի միայն այժմեան քանասիրական հանգամանքներով, մասնաւոր ըստ մեր մասնական դատմանը, զիրաւ և ստուգիւ բանալ անոնց գաղտնիքը, այնպէս ինչպէս չենք կրնար ծածկ մը նորայայտ բողոքէն չափել անոր հնութիւնը: Գնալ կրնար արդարանալ ըստ ինչ, թէ ուրիշ հնար չկայ — անկարելի է լայս ինչ միարանել ընդ այնր —, և այլն: Որովհետև ամենքնիս Ալեքսանդր չենք, անոր համար իրաւունք չունինք առանց լուծելու՝ պարզ կարել և բացասել այն խորհրդաւոր հանգուցը, զոր այնչափ հինուորոց դարք իրենց պատմական յեղափոխութիւններովն հիւսեցին: Մինչդեռ ընդ հակառակն Խորենացին և իւր երկասիրութեան աղբիւրներն՝ իրենց իրաւանց մէջ են միտ գոյութիւննին պահելու զարուց ՚ի գարս: Քանի որ անոնցմէ աւելի հին, պատմական, ստոյգ, անժխտելի և բացայայտ հաւաստիք աննոց գէմ չեն գիտուած ուղղակի և յայտնի կերպով: վասն զի առաջնոց համար այնչափ դարերու և ազգաց վկայութիւնքն՝ հանդերձ անժխտելի և անհաւթիւմամբ՝ երայխաւոր են:

Սակայն թողլով զանոնք յնիւրայն գրուածոց, այս կարևոր ազգարարութեամբ առ ընթերցողս կ'ուզենք ու զարծինել ուղղակի մեր նախնիկաց նիւթին, այսինքն պատմագրութեան Մ. Խորենացւոյ և անոր հաւատարմութեանը: Ուստի կ'ըսենք, թէ զրոց ուղիղ մկննտ քննութեան ներքին և արտաքին կանոններն յատկացնելով Մ. Խորենացւոյ կենաց և վարուցը, լաց ՚ի անոր ծերութեան տկարութենէն ու անկէ առաջ եկած անմիջական թերութեանց, ըստ ամենայնի հաւատարիմ աւանդա-

կը ձգէ. մինչդեռ քաջամտաբն անգամ յերկրաբանս և ՚ի մեկնելս, լիւրի, փութք, փրանչանի և Հնորիկոս Ռայցէլ, յայտնապէս կը խոստովանին թէ երկրաբանութիւնը մինչև ցարդ ստոյգ և համարա սկզբանց վրայ

պուհ և անխարդախ պատմաբանս որ կը ներկայանայ մեզի Խորենացին ըստ ինքեանս: Այլ թէ ինքն իւր պատմութեան աղբերաց ընտրութեանը նկատմամբ այ նոյնը պահած է արդեօք, այս քննելու է կ'ըսենք, և անոր ծերութեան ժամանակին և խուզարկութեանը վրայ քիչ մը կասկածելու ենք, ինչպէս նա իրնք կը կամ կ'իւր Ա. գրոց ժի՛ծ գիտուն մէջ, բտելով. «Իսկ ըստ որոց հաւաքումն Ստուծոյ ինեւ յայտնիս և մարդկան զովկիս, և մեր յայնց ստար և բաշակացեալ »:

Գուցէ այս մեր կասկածն անոր անձին և երկասիրութեանը վրայ իսկ ածի և իրաւունք ստանայ, եթէ կարողանք Ղազարայ Փարպեցոց առ Վահան Մամիկոնեան գրած թղթոյն մէջ, մեր ազգին անվաստութիւնն և շարսխոսութիւնքը, որոնք զԽորենացին Փարպէղիկես կը կանչէին:

Ասկայն եթէ Հեղինակին այն թղթին խորը թափանցելով անոր տեսակէտը հետազօտենք, կր տեսնենք ստուգիւ թէ սոյն ամբաստանութիւնն ամբողջ հայ ազգին վկայութիւն չէ, այլ տիմար արեղայից, որոնց առ ստորս և գիտունս ըրած թնամանքն կարգաւ յիշելով, կը յաւելու. « Երանելի Փիլիսոփոսն մեր Մովսէս, որ արդարև մինչդեռ էր ՚ի մարմնի՛ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից, ո՛չ ապաքէն ՚ի տեղովէն ՚ի տեղի արեղեանդ Հայոց հայածական արարին. ո՛չ զոռաստորիս և զտգիտանալու զգրեանն նորա՝ առ անդիտութեան Փաթարիկէս կուչէին »: Ուստի այժմ Հայոց արեղայից պարսուէն աւելի, Ղազարայ պէս իմաստուն և ստուգաբան պատմիչին՝ մեր քերթողաճօր տուած գրուածեացը վրայ պէտք է վստահիլ: Ուրեմն ոչ մէկ կերպով օրինաւոր չէ այն արեղայից կարծիքը ամբողջ ազգին վերագրել, ապա թէ ոչ հակասութեան մէջ կ'իյնանք: վասն զի այս պարագայիս մէջ, այսինքն է, գիտութեան ասպարիզին մէջ գիտնաց ձայնին ուղ զնելու է. որովհետև Խորենացւոյն ժամանակներէն սկսեալ մինչև ցլիբը ամենայն հարք և վարդապետը Հայոց և պատմագիրք և ստիգեանք՝ զնա յերկինս կը բարձրացնեն, և չկայ ստուգիւ մկն՝ որ անոր դէմ երկասիրած ըլլայ: Գարծեալ, եթէ անոնց շարպիզու ամբաստանութեանը հաւասք ընծայելով՝ կամենանք երբա կացութիւն մը յոռով բերել, այն ժամանակ ոչ միայն Խորենոյ ծերունին՝ այլ և զամենայն իմաստունս և աւաքինիս, մեծն Երեսօսէն ց'լազար Փարպեցի, զորս մէջ կը բերէ Փարպեցիյն, պիտի պարտաւորինք նոյնպէս համարել:

հիմնեալ և ազգացուցած գիտութիւն չէ, այլ զեռ հանձարեղ ենթադրութեանց շարք մը, և թէ մարդկային ազգին զգոյթիւնը վերայիշեալ թուէն անգին չանցնի՛ր՝ 1 Տես Խոր. Պատմ. Հայոց Ա. Գլ. ԺԲ. էջ 80:

Որովհետև Խորենացւոյ վարքն և կեանքը, ինչպէս բռնիք՝ ծանօթ է, և անտրատ սրբութեան նորա ոչ միայն տոհմային ժամանակակից, այլ և յետագայ մատենագիրք, ինչպէս Գանձակեցի, Արծրունի և Շնորհալի, անդու յի վրայք են, ուստի Խորենացի բոլոր ազգիս մէջ Ք.Պ դարուց 'ի վեր ամենահմուտ գիտութեան ստիպատէս մը և անխարզօր վարուց օրինակ մ'եղած է: Աւելորդ համարելով Հայաստանեայց եկեղեցւոյ Հահանման լուսապայծառ Ս. Հարց անոր վրայ տուած պանծալի վրկայողութիւնքն 'ի մէջ բերել, միով բանիւ կ'ըսենք ընդ Սամուելի Անեցւոյ, Պատմարան կարի յոյժ հմարտախօս:

Նոյն իսկ արտաքին քննադատք ևս՝ խոր դաս պատմի գաղափար շունեցան ընաւ անոր վրայ, ինչպէս Որբան անգամ դիրսահառան և ժականը միայն կու տայ: Այսպէս ալ մենք յաւմենայնի պատկառ կարով անոր անձին՝ ոչ զյաւձրենէք անոր աղբերացը վրայ, և քննենք թէ ստուգիւ ինչպէս որ գտաւ, այնպէս ևս աւանդեց մեզի, եթէ ոչ:

Կը շարունակուի:

Յիրաւի այսպիսի քննադատութեան մի ձեռք զարնելը ամենագզուշոյի և յոյժ փափուկ կէտ մ'է, և 'ի վեր քան զկար մեր. սակայն այս խնդրոյս նկատմամբ մեր Հայրենեաց և Հայաստանի օրտին վրայ բացուած վէրքը մեղմելու համար սկանք, ուստի ներուձն կը խնդրենք մեր համարձակութեանն և խիստ դատողութենէ աւելի՝ անոնց հմարտասէր կարեկցութեանը կը յուսանք հանդիպել:

Որո՞նք են արդեօք այս աղբիւրներս: Ըստ վկայութեան նոյն իսկ Խորենացւոյ՝ են Ա. Աղբիւրք՝ հեթանոս մատենագրաց, Յունաց մատենաոր կերպով. Բ. Աղբիւրք՝ հեթանոս-Քաղղէացի մատենագրաց, բայց ըստ յունարէն թարգմանութեան. Գ. Աղբիւրք՝ պարսիկ և ասորի մատենագրաց, թերևս յոյն թարգմանութեամբ, որ կային իրեն ժամանակ. Դ. Աղբիւրք՝ Եղեւսոյ, Մծրնայ և Սինպի գիւտնեբլը, որոնց անձամբ այց ելաւ և քննեց. Ե. Աղբիւր՝ Հայաստանի ժողովրդական երգեր, զբրոյցք, և այլ աւանդութիւններ, զորս Հայք մինչև Եր գար դեռ կենդանի կը պահէին:

Հ. ԲԱՐՈՅՆ, ՍԱՐԳՍԵՍԸՆ

Չիւն է մարդն .

Մարդն կարի արագապէս փոփոխի. զի թէպէտ որպէս զերկիրն բարձրանայ, որպէս զերկիր մտխրանայ, որպէս զամպ սփռի, և որպէս կաթիլ պահասի. որպէս ծաղիկ պայծառանայ, և որպէս խոտ չորանայ. որպէս բոց բորբոքի, և որպէս ծախ լուծանի. որպէս մրրիկ փոթորկի, և որպէս սարդի ոտտայն անկանի. որպէս Հնոց ստատու կանայ, և որպէս առկառ շիջանի. որպէս զծով յառնէ, և որպէս զաւազ 'ի խորս ընկղմի. որպէս զծառ վայելչունայ, և որպէս զտերև թօթափի: Երբեմն որպէս ըզլուտան կարծէ զինքն, և երբեմն որպէս ըստուեր աներևոյթ լինի. երբեմն որպէս զառիւժ գոչէ, և երբեմն որպէս զմիխ տկարանայ. երբեմն որպէս հողմն ստատիկ 'ի զիմի հարկանի, և երբեմն որպէս հեղեղատ յառնէ և երբեմն որպէս խօր. 'ի հողմայ հալածի: Այսօր ուրախ և 'ի վաղիւն տրտում. ընդ առաւօտն ստողմ, և ընդ երեկն ցաւագին... այսօր ահարկու և վաղիւն ահարկու:

ԱՆՆԵՆԱ ՎԱՐՈՅՆԸՆ

Աւաէք .

Այն օրն որ 'ի մօրէ կու ծնանէիր, ամէն ուրախանային, գու յայիր. հանց բան արա որ այն օրն որ մեռնիս, ամեններեան լան և դու ուրախանաս:

Թէ տասն խօսք բարի գիտես, գու զինն խօսեսայ, և զմինն պահէ:

Ի սև ամպոյն և 'ի խելայեղ մարդոյն մի վախենար, այլ 'ի սպիտակ ամպոյն և 'ի խելօք մարդոյն:

Ո՛վ ամառն դատարկ 'ի շուրջ գայ, ձմեռն ատամն 'ի վերայ ատամանն տայ:

Աւիւձն որսորդ չլինի, աղուէս մի լաւ քան զնա:

Գաղտնի մեղքն լաւ է քան զյայտնի առաքինութիւնն. թէ աստուածապաշտ ես, փառապաշտ մի լինիր:

ՈՍԿԵՓՈՐԻՍ